

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

(Պատրիարք Թուրքիո հայոց)

ՓՈՔՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ ՄԸ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ԱՌԹԻՎ

Մեծ հաճությամբ ենք արտատպում Նորին Ս. Օծուքուն Ս. Ս. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի «Համայն հայ հոգևորականության» ուղղված 1957 թվականի հունվար 14-ի սրբատառ կոնդակի առթիվ Թուրքիայի հայոց Պատրիարք Ամենապատիվ Ս. Գրեգորի Արքեպիսկոպոս Խաչատուրյանի Կոստանդնուպոլսի «Եռակաթ»-ի 1957 թվականի փետրվար-մարտ համարում լույս տեսած բովանդակւից այս հոդվածը:—ԽՄՐ.:



այրապետական սույն կոնդակը, ներքինում և արտաքինում, ձևով և բովանդակությամբ գեղահյուս, ուղղված հայ հոգևորականության, կրքեր մեզի մեղմաշարժ ծփանքը «իմաստության ալիք»-ներուն, որոնք կայութեան ու կաղաչան իր սրտի ծովու ալքեն: Կճանչնանք մենք զինքը: Նախքան օծումն իր շնորհազարդ, ունեւր Նա իր վրա «Հոգի Տեառն»: Օծումը՝ ներքին, որ ապա «սրբարույս մյուռն»-ով կկնքեր բարձրագույն կոշտը դեպի Միաժնատհիմն և Առաքելական Մայր Աթոռ Ս. Լուսավորչի, վերարժարծեծելու անպարան կանթերն ամուր մշտապալան: Օծումը երեքկին՝ ազնւարանչութեան:

...Հստակ և անսեթեթ են, արդարեւ, սուրբ կոնդակին խոսքերը՝ հայրական և եղբայրական, հայրապետական-շնորհալիական շունչով ու շուքով ալ հեղինակավորված: Եվ նաև առաքելական, զի իր հորորոնքը «ընտիր անօթ» և մեծ առաքյալ Պողոսի գրչին կառնեն իրենց թելադրանքն ու շեշտը, խոնարհ ու խիստ միանգամայն, իր խղճմը տանքին վկայութեամբ ճշմարիտ:

Հովվապետ մըն է, որ ունի սրինգ և փող, որոնցմով լսելի կընեն իր դաշն ձայնն ու դաստապցուցիչ սաստը իր հովվակիցներուն, կատարյալ գիտակցութեամբ Էր պաշտոնին ծանր պատասխանաւորութեան: Հովվակիցներուն՝ ամեն աստիճանի, բոլոր Տիմոթեոսներուն, որոնք կոչված են աշակարուտ մայրերու մեջ հանգստացնելու և

հանդարտ ջրերու մոտ «անուցանելու» իրենց հոտը՝ բանականութեամբ հազած պատկերն Աստուծո: Հովվակիցներուն, որոնց մեջ պարտի ապրիլ ու քործել «հոգևորականը», բարձրագույն և ազնվագույն տեսիլի մը շողերուն առաջնորդութեամբ:

«Այեծփանք մը կա», ակնարկեցինք, Հայրապետին սիրտ ծովուն մեջ, ի տես նախաբեկյալներու Դառն վիշտի կոտորածներով և բեկումներով խոռոված: Հասկնալի... Եվ արդարանալի: Իր արթուն աչքին առջև չեն հոգիի ահապոր դատարկումները, իրենց զրապանակները լայնցնող ու ղգեստի քղանցքները երկայնցնող, ընթրիքներու մեջ հառաջագահ, ժողովարաններու մեջ անխաթոտ ըլլալ սիրող, հրապարակներու մեջ ողջունվիլ և մարտցմե «Ռաբբի, Ռաբբի» կոչվիլ ուզող «հոգևորականներ»-ու մեջ: Ամեն աստիճանի, ամեն աստիճանի: Պարապոթյուն մը փքացած հպարտութեամբ՝ և ունախամտութեամբ, և ստոնց ծնունդ ամեն մեղքերով՝ կոնդակին մեջ մատնանշված:

Հայաստանյայց եկեղեցւոյ «նախուղիղը», դեգերելով խորտակված նախերու հանդեպ, փնչպե՞ս չողքա, «ձեռն ի ծնոտի փնելով» «արտատպաց գետեր» չիջեցնեն, և հուզված ծովուն վրա ծփացող բեկորներուն, իբր ճշմարտ խոռխոռվածներ»-ու դեմ կանգնած, ինչպես չհեծն եռոյրմագին թախանքով: Ո՞վ պիտի կրնար, Նարեկացիի շարի, տալ հրաշալի պատկերը «խմանալի գոյութեան» այս ջախջախված խառապան»-ին, հոգևորեն դատարկված ու աղարտված տա-

պանին: Այս հոգեկան խռովքն ու տառապանքն են, որ ալեկոծեր են զգայուն սիրտը մեր Հայրապետ-նապետիդին: «Շատ դառնացած էինք և չկրցանք չգրել»,— կհայտնեն իր մեկ նամակին մեջ, առնչությամբ իր այս կոնդակին: Եվ ավելին ալ կըսեն, կարծես խղճահարելով— իզո՞ւր— թե «Արդոք շատ խիստ էին իր խոսքերը: Մենք կհավատանք իր նարեկացիական սրտի «ճենճերում»-նեղուն, տխուր ու իրական պատկերին առջև հոգեկան այս նալարեկությունց հոգևորական դատուն մեջ ընդհանրապես:

Շունչ մը կա այս կոնդակին մեջ, այն «Բեղհանքական»-են՝ որ Շնորհալիինն է: Պիտի կարդացվի այս «Ընդհանրական»-ը, մոտ առնեն, «Շողակաթ»-ի մեջ, Ծ դարու Ոսկինն զանակ մ'առած շնորհալիական արծաթահյուս բարբառով և այժմյան լեզվի վերածովով միանգամայն: Տխուր է խորհիլ և հաստատել, թե ԺԲ դարում Հոռմկլայի «օձերու և կարիճներու բերք»-ին մեջ՝ նժգեհացած ծերունազարդ Հայրապետեն մինչև ի դարուս իր սեփական կուսախորանի Աթոռին վրա բազմած մեր երիտասարդ Հայրապետը, նույն հոգեխռովքն ու մտահոգությունն ունին հոգևորականության մեջ երևան եկած տխուր երևույթներու մասին, երևույթներ, ուր «այս աշխարհը» կըռնատիրե հոգիին՝ վրա նյութի բիրտ կապանքներով, աստվածադրոշմ՝ նկարագիրը մարդուն,— պահանջելի և հաղթագլուտ վկայականը հոգևորական կոչումին:

«Ոչինչ տուննալ և ամեն ինչ տուննալ»: Աղքատ են բոլոր անոնք, որ չեն ըմբռնիր խորհրդածելի ճշմարտությունն առաքելագրուտ այս հակադրության: «Ամենայն ինչ»-ը արտաքին պերճանք մը կամ ճոխություն մը չէ, ոչ ալ փայլ մը կամ փառք մըն է սին: «Ծածկված, ներքին գանձ» մըն է այն, տգեկան իրավ արծեքներու հարստություն մը, որ որքան բաժնվի ու բաշխվի՝ այնքան կառատունալ: Զի տալը առնել է և աղքատանալը՝ հարստանալ: «Ոչինչ»-ը անձին գանձումն է նյութական առավելությունց, հորանալն ու հափրանալն է այլամերժ անձին, անշափ և անսահման, անմիտին խոլական շտեմարանումն է «բազում

բարությունց»՝ դորս գիշեր մ'իսկ կարելի չըլլար վայելել: Դէ որ «զաղփաղփոն են հնարագիտությունք մեր», ըստ Իմաստունին, և «զամենայն գործն զեղծ և զաղփաղփուն» ի կործանումն դարձուցանէ», ըստ Ոսկերիանի: Դարանակալ մահը կա, որ կուլ պիտի տա այսպես համբարված բոլոր բարիքները, վերածելով զանոնք որդի և փոշիի: Կա, սակայն, նաև «Աստուծով մեծանալ» մը, «մեծանալ գործովք բարոյական», «գանձել անձանց հիմն բարի ի հանդերձեալսն», ձեռք բերելու համար «ճշմարիտ կեանք»-ը: Ահա թե ինչպես կարելի է «ոչինչ ունենալ» և «ամեն բան ունենալ»: Սրբազնագույն Հայրապետը իրավունքով կհիշեցնեն մեզ ավետարանաշունչ այս ճշմարտությունը: Եվ ի՞նչ անփոխանակելի այս հարստությունը, որմե զրկված են «բազում տարիներու համար բազում ինչ» ունենալ կարծող անմիտները: Եվ որքան ողբալի, այս անմիտներու շարքին մեջ տեսնել, «իրենց հոգևոր կոչման բարձրության վրա ըլլալի հետո» ամեր հոգևորականներեն շատեր: Սուրբ նախանձախնդրության զայրույթը նեղմամբ իր կուրծքին տակ, դեռ զուսպ է, զուսպ մեր Հայրապետին լեզուն, ձաղկելու համար այսպիսի անմիտները և ուղղության հրավիրելու զանոնք:

Ծնցվինք, ցնցվինք բոլորս ալ և ականջ տանք Հոռմկլայեւ-Ավետարանչի ձայնին և կոչին: Ըլլանք «օրինակ հավատացյալներուն՝ խոսքով, վարքով, սիրով, հավատքով և սրբությամբ», որպեսզի մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհքին հետ, մեր Հայրապետին օրհնությունն ալ գա մեր վրա:

Եվ Դո՛ւ, շնորհազարդ Ս. Հայրապետ Ամենայն Հայոց և միակ տեսանելի և օժյալ Գրգիսը Հայաստանյայց Եկեղեցվո միակ Մարմնույն, մի՛ խղճահարի սիրույդ քաղցրությամբ թաթաղուն լեզվիդ խստությունը համար: Ան բուժիչ է: Շնորհալին Քեզ քաջալեր:

«Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ, Հոգի Հօր և Որդոյ...

Շնորհազարդ պայծառացո՛ղ զգաւալն իշխանութեան մերոյ Հայրապետին, Զի օրհնեսցո՛ւք զՔեզ, Տէր, այժմ և

յափտեան»: (ՇԱՐԱԿԱՆ)

